



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

ապրիլի 2021 թվականի № Ա  
ք. Երևան

#### «ՍՈՒԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. «ՍՈՒԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի ապրիլի 8-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով անվավեր ճանաչել Հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 24-ի №57Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 2-րդ մասի 1-ն կետը՝ այն համարելով ոչ իրավաչափ համաձայն Սահմանադրության, «Էներգետիկայի մասին» օրենքի և Սահմանադրական դատարանի որոշումների:

Որպես վարչական բողոքի հիմնավորում՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

- 1) «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկրորդ անգամ երկարաձգվելու դեպքում երաշխիքային գումարը Հանձնաժողովի սահմանված կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Նշված իրակարգավորման ուսումնասիրությունից Ընկերության համար պարզ է դառնում, որ երկրորդ անգամ երկարաձգվելու դեպքում է երաշխիքային գումարը ենթակա փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, ինչից էլ եզրակացրել է, որ «Էներգետիկայի մասին» օրենքի որևէ դրույթ չէր սահմանում, որ առաջին անգամ երկարաձգվելու դեպքում երաշխիքային գումարը ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,
- 2) Որոշման մեջ Հանձնաժողովը մատնանշել է իր 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ), №3 հավելվածի՝

երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, միջոց տվյալ իրավիճակում՝ Ընկերության կարծիքով, վերաբերելի և կիրառելի է հիշյալ կարգի «8-րդ կետի 1-ին ենթակետը», որի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքի կեսը Հայաստանի Հարապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե Հանձնաժողովը որոշում է ընդունել լիցենզավորված անձի լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու մասին,

3) Ընկերությունը, մատնանշելով Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 6-րդ և 79-րդ հոդվածները, ինչպես նաև Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, եզրակացրել է, որ Որոշումը խախտում է Սահմանադրության մի շարք էական սկզբունքներ, որոնք են, ի թիվս այլնի՝ իրավական նորմերի աստիճանակարգության, օրինականության և որոշակիության սկզբունքները: Հանձնաժողովը, չունենալով օրենքով սահմանված համապատասխան լիազորություն, Ընկերության համար սահմանել է պարտականություն լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածն առաջին անգամ երկարաձգվելու դեպքում 5 000 000 (հինգ միլիոն) դրամ փոխանցել Հայաստանի Հարապետության պետական բյուջե: Ընկերությունը եզրակացրել է, որ Հանձնաժողովը սահմանափակել է Ընկերության իրավունքն առանց բավարար հիմքի և այդ սահմանափակումը բավարար չափով որոշակի չէ համապատասխան անհրաժեշտ վարքագիծ դրսևորելու համար: Որոշումն անորոշ է և հանգեցնում է տարաբնույթ մեկնաբանությունների և շփոթության,

4) Մատնանշելով Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշման 3-րդ կետի 11-րդ ենթակետը (ընդ որում հղումը սխալ է արված), Ընկերությունը նշել է, որ չի կարողացել իր պարտականությունները համապատասխան ժամկետում կատարել երկրի արտակարգ և ռազմական դրության մեջ գտնվելու պատճառով, ինչը Հանձնաժողովի կողմից հաշվի չի առնվել,

բ. սույն թվականի ապրիլի 8-ից հարուցվել է Որոշման վերաբերյալ բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 9-ի №ՍՇ/34.1-Մ2-4/1145-2021 գրությամբ,

գ. իրականացված վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

- 1) Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.
  - «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետը, համաձայն որի՝ էլեկտրական կամ ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու, լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածում կայանը չվերակառուցվելու, լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվելու, ինչպես նաև արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, հանձնաժողով ներկայացնելու ժամկետը երկրորդ անգամ երկարաձգվելու դեպքում երաշխիքային գումարը հանձնաժողովի սահմանած կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,
  - Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետը, համաձայն որի՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվել է,
- 2) Որոշումն ընդունվել է գործող իրավակարգավորումների պահանջներին համապատասխան և լիովին բավարարում է վարչական ակտի որոշակիության պահանջին և այն մասնակի անվավեր ճանաչելու իրավական հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Որոշումն ընդունվել և «Շերամ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության (հզորության) ԼԷ№0640 լիցենզիայով ամրագրված՝ կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է 2021 թվականի փետրվարի 10-ին Հանձնաժողով ներկայացված Ընկերության համապատասխան հայտի հիման վրա, քանի որ Ընկերությունը ԼԷ №0640 լիցենզիայի պայմանների 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում՝ մինչև 2021 թվականի մարտի 1-ը չի ավարտել կայանի կառուցումը: Ինչից ելնելով էլ Կարգի №3 հավելվածի՝

երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա, նույն որոշմամբ Ընկերությանը պարտավորեցվել է երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

3) Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել Որոշումների ընդունմամբ որևէ իրավակարգավորման խախտման հանգամանքը, իսկ վարչական բողոքում վերջինի նշած պնդումներն անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

- Ընկերության կողմից, «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի մեկնաբանությունը սխալ է, քանի որ մատնանշված իրավանորմում երկրորդ անգամ երկարաձգման դեպքը վերաբերում է արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագծի ներկայացման ժամկետին, լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման առնչությամբ նման կարգավորում քննարկվող նորմում առկա չէ, և լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը յուրաքանչյուր երկարաձգման դեպքում երաշխիքային գումարը Հանձնաժողովի սահմանած կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, ինչն առավել քան ակնհայտ է քննարկվող հոդվածի կետի բովանդակությունից,
- Ընկերության պնդումը Որոշման կայացման համար Կարգի «№3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի «8-րդ կետի 1-ին ենթակետի» կիրառելի լինելու առնչությամբ ևս անհիմն է, քանի որ լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի երկարաձգման դեպքում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին որոշման կայացման իրավունք սահմանող նորմն ամրագրված է Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի, ինչպես Որոշման կայացման պահին, այնպես էլ

ներկայումս գործող, 7-րդ կետի 1-ին ենթակետում, որն էլ հիմք է ընդունվել Որոշման կայացման համար, իսկ «8-րդ կետի 1-ին ենթակետ» Կարգում ընդհանրապես առկա չէ,

- Իր պարտականությունները համապատասխան ժամկետում կատարելու անհնարինության պատճառները Հանձնաժողովի կողմից հաշվի չառնելու մասով Ընկերության պնդման առնչությամբ հարկ է նշել, որ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10-րդ կետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, մինչդեռ Ընկերությունը, ինրպես ԼԷ №0640 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով, այնպես էլ սույն վարչական բողոքով որևէ կերպ չի ապացուցել և չի հիմնավորել իր կողմից՝ սահմանված ժամանակահատվածում պարտավորության չկատարումը մատնանշված ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Մասնավորապես, Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել թվարկված հանգամանքների ուղղակի առնչությունը լիցենզիայով ամրագրված՝ Կայանի կառուցման պարտավորության

կատարման անհնարինության հետ, նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը ձեռնարկելու հանգամանքը: Ավելին, 2021 թվականի փետրվարի 2-ի հայտով Ընկերությունն անգամ ակնարկ չի արել երկրում հայտարարված արտակարգ և ռազմական դրությունների՝ իր պարտավորության կատարմանը խոչընդոտող ֆորս մաժորայինի հանգամանք լինելու մասին,

- Անդրադառնալով Որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի խախտման մասին Ընկերության պնդմանը, հարկ է նշել, որ այն ևս անհիմն է: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1176 և ՍԴՈ-1213 որոշումներում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» և «... իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերոնշյալի լույսի ներքո Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետով և Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսվել է արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու դեպքում երաշխիքային գումարը Հանձնաժողովի սահմանած կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հնարավորությունը:

Տվյալ դեպքում Որոշմամբ լուծվել է Ընկերության կողմից հայտը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված կառուցման

Ժամանակահատվածը երկարաձգվելու պարագայում ընկերության նկատմամբ վարչաիրավական ներգործություն իրականացնելու հարցը, որպիսի պայմաններում հենց վիճարկվող վարչական ակտում ներառված՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը ամենաանմիջական ձևով է կարգավորում խնդրո առարկա հարաբերությունները:

Որոշման բովանդակությունից Ընկերությունը կարող է լիարժեքորեն պատկերացում կազմել ինչպես տվյալ դեպքում կատարված՝ էներգետիկայի ոլորտի օրենսդրության կոնկրետ խախտման հանգամանքների, այնպես էլ կոնկրետ իրավանորմերի վերաբերյալ ու դրսևորել համապատասխան վարքագիծ: Ուստի, Հանձնաժողովը փաստում է, որ Որոշումն ամբողջությամբ համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքի պահանջին:

4) Որոշման բեկանման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերը բացակայում են, և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Ընկերության 2021 թվականի ապրիլի 8-ի վարչական բողոքը՝ Հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 24-ի №57Ա որոշումը մասնակի անվավեր ճանաչելու վերաբերյալ:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**